ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք.Երևան ,,23,, ----08----2016թ.

«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հինմադրամը, այսուհետ՝ **համալսարան**, ի դեմս ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի, մի կողմից, և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի արհեստակցական կազմակերպությունը, այսուհետ՝ **աշխատողների ներկայացուցիչ**, ի դեմս նախագահ Հասմիկ Սարգսյանի մյուս կողմից, միասին՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն կոլեկտիվ պայմանագիրը համալսարանի և աշխատողների ներկայացուցչի միջև գրավոր ձևով կնքված կամավոր համաձայնություն է, որը կարգավորում է աշխատողների և համալսարանի միջև աշխատանքային հարաբերությունները:

1.2. Համալսարանի և աշխատողների ներկայացուցչի կոլեկտիվ պայմանագիրը կնքված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի, համալսարանի կանոնադրության, <<Արհեստակցական միությունների մասին>> ՀՀ օրենքի, աշխատողների ներկայացուցչի կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա:

1.3. Կոլեկտիվ պայմանագրի կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են կողմերը կամ այդ նպատակով նրանց լիազորած ներկայացուցիչները:

1.4. Կոլեկտիվ պայմանագրի գործառույթները տարածվում են համալսարանի բոլոր աշխատողների վրա:

1.5. Կոլեկտիվ պայմանագրի առարկա են հանդիսանում համալսարանի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի պայմանների, աշխատանքի վարձատրության և դրանց հետ կապված այլ հարցերի լուծման նկատմամբ տրամադրվող երաշխիքների և արտոնությունների վերաբերյալ լրացուցիչ դրույթների սահմանումը:

1.6. Կոլեկտիվ պայմանագրի կողմերը պարտավորվում են համագործակցել և իրականացնել աշխատողների և համալսարանի շահերը աշխատանքային հարաբերություններում:

1.7. Կողմերը փոխհամաձայնեցված գործունեությամբ ապահովում են համալսարանի ակտիվ կենսագործունեությունը, պաշտպանում աշխատողների աշխատանքային, ուսումնական, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական՝ ՀՀ Սահմանադրությամբ, համալսարանի կանոնադրությամբ և այլ

իրավական ակտերով սահմանված իրավունքներն ու շահերը, նպաստում համալսարանի վարկանիշի բարձրացմանը:

2.Կողմերի համատեղ պարտականությունները

Կողմերը պայմանավորվել են՝

2.1. ստեղծել աշխատանքի անվտանգության, առողջության պահպանման և աշխատողների սոցիալական խնդիրների լուծման գծով համատեղ հանձնաժողով,

2.2. աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների պատճառները պարզելու նպատակով օրենքով սահմանված կարգով անցկացնել համատեղ ծառայողական քննություն:

3. Աշխատանքային պայմանագիր, զբաղվածություն

3.1. Աշխատանքի ընդունվելու ժամանակ աշխատանքային փոխհարաբերությունները ձևակերպվում են համալսարանի հրամանով՝ գրավոր աշխատանքային պայմանագիր կնքելու հիման վրա: Աշխատողները աշխատանքի են ընդունվում մրցույթով կամ առանց մրցույթի՝ ՀՀ օրենսդրությամբ և համալսարանի կողմից սահմանված կարգով:

3.2. Աշխատանքային պայմանագիրը կնքվում է երկու օրինակից և նույն օրը գրանցվում աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանում:

3.3. Աշխատանքային պայմանագրերը կնքվում են՝

- անորոշ ժամկետով, եթե աշխատանքային պայմանագրում դրա գործողության ժամկետը նշված չէ,
- որոշակի ժամկետով, եթե աշխատանքային պայմանագրում դրա գործողության ժամկետը նշված է:

Աշխատանքային պայմանագիրը ներառում է համալսարանի և աշխատողի հիմնական իրավունքները և պարտականությունները, որոնք բխում են կատարվող աշխատանքի առանձնահատկություններից:

Համալսարանի կողմից կարող են սահմանվել աշխատողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ պաշտոնի անձնագրեր:

3.4. Աշխատանքային պայմանագիրը չի կարող վատթարացնել աշխատողի աշխատանքային պայմանները, որոնք սահմանված են գործող օրենսդրությամբ, ինչպես նաև սույն կոլեկտիվ պայմանագրով:

3.5. Համալսարանը և աշխատողները պարտավորվում են կատարել աշխատանքային պայմանագրի պայմանները:

3.6. Առանց աշխատողի համաձայնության նրան այլ աշխատանքի փոխադրելը թույլատրվում է միայն օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

3.7. Համալսարանը աշխատողների ներկայացուցչին ներկայացնում է տեղեկատվություն աշխատողների հնարավոր զանգվածային ազատումների մասին (աշխատանքից ազատումը համարվում է զանգվածային, եթե 2 ամսվա ընթացքում աշխատանքից ազատվում են աշխատողների ընդհանուր թվի 10%-ը կամ ավելին):

3.8. Համալսարանը և աշխատողների ներկայացուցիչը, հնարավորության սահմաններում, կարող են աջակցել աշխատողների սոցիալական խնդիրների լուծմանը:

4. Աշխատաժամանակ

4.1. Աշխատողների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ իրար հաջորդող երկու հանգստյան օրով:

- Համալսարանում շաբաթական աշխատաժամանակի տևողությունը չի կարող գերազանցել 40 ժամը, ընդմիջման սկիզբը և ավարտը սահմանվում է հրամանով՝ համաձայնեցված արհկոմիտեի հետ:
- Ոչ աշխատանքային, տոնական և հիշատակի օրերի նախօրերին աշխատանքի տևողությունը կրճատվում է 1 ժամով, բացառությամբ կրճատ և ոչ լրիվ աշխատանքային ժամանակի պայմաններով աշխատող աշխատողների:

4.2. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքային բեռնվածությունը և վարձատրությունը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և չափով՝ աշխատողի և համալսարանի համաձայնությամբ, ըստ համապատասխան ստորաբաժանման ղեկավարի ներկայացրած ժամանակացույցի:

4.3. ՀՀ կառավարության սահմանված ցանկի համաձայն, աշխատողի և համալսարանի համաձայնությամբ, գործում է նաև հերթափոխային աշխատանքի համակարգ:

4.4. Չփոխելով սահմանված շաբաթական աշխատաժամանակը՝ սահմանվում է երկհերթ աշխատանքային ժամանակացույց պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմերի համար:

5. Հանգստի ժամանակ

5.1. Հերթական արձակուրդների տրամադրման ժամանակացույցը սահմանվում է մինչև դեկտեմբերի վերջը, հաստատվում է համալսարանի կողմից աշխատողների ներկայացուցչի համաձայնությամբ, որին ծանոթանում են բոլոր աշխատողները:

5.2. Հերթական արձակուրդի տեղափոխումը բացառիկ դեպքերում թույլատրվում է ստորաբաժանման ղեկավարի ներկայացմամբ, համալսարանի թույլտվությամբ:

5.3. Բացի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արձակուրդից լրացուցիչ չվճարվող արձակուրդ մինչև յոթ աշխատանքային օր կարող է տրամադրվել բարդ աշխատանքներ կատարողներին երկարատև չնորմավորված աշխատանքների դեպքում:

5.4. Աշխատողի պահանջով չվճարվող արձակուրդ տրամադրվում է՝

5.4.1. հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվող, ինչպես նաև մինչև մեկ տարեկան երեխային խնամելու համար արձակուրդում գտնվող կնոջ ամուսնուն: Այդ արձակուրդի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել երկու ամիսը,

5.4.2. հաշմանդամ աշխատողին կամ ընտանիքի հիվանդ անդամին խնամող

7. Աշխատանքի պայմանները

7.1. Համալսարանը պարտավորվում է՝

7.1.1. ճանաչել և ընդունել աշխատողների ներկայացուցչի կանոնադրական իրավունքները,

7.1.2. գործող իրավական ակտերի պահանջներին համապատասխան յուրաքանչյուր աշխատողի համար ապահովել կահավորված, անվտանգ, հարմար և առողջության համար անվնաս աշխատատեղ և շրջակա միջավայր,

7.1.3. սահմանել հատուկ մասնագիտական գիտելիքներ պահանջող աշխատանքների ցանկը, որակավորման պահանջները և որակավորման քննությունների անցկացման կարգը: Հրամանագրել որակավորման քննությունների անցկացման ժամանակացույցը,

7.1.4. ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի բարձր որակը և կարգապահության պահանջվող մակարդակը,

7.1.5. նախապես անցկացնել աշխատանքային անվտանգության կանոնների ուսուցում, հրահանգավորում և ատեստավորում,

7.1.6. ելնելով իրականացվող աշխատանքի վտանգավորության աստիճանից՝ հաստատել պարտադիր և պարբերաբար բժշկական զննության ենթակա աշխատակիցների ցանկը և ժամանակացույցը,

7.1.7. համապատասխան աշխատողների պարտադիր և պարբերաբար բժշկական զննությունը իրականացնել աշխատանքային ժամերին,

7.1.8. գործող իրավական ակտերով սահմանված կարգով ապահովել աշխատանքի ժամանակավորապես դադարեցումը,եթե աշխատատեղում առաջացել են աշխատանքի անվտանգության անապահով պայմաններ,

7.1.9. նյութական պատասխանատվություն կրել աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ խանգարումների դեպքում,

7.1.10. աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում տեղի ունեցած յուրաքանչյուր դժբախտ դեպքի, խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասների դեպքում պատճառները ուսումնասիրելու և հետագայում կանխելու նպատակով ստեղծել համատեղ հատուկ հանձնաժողով:

7.2. Աշխատողների ներկայացուցիչը պարտավորվում է՝

7.2.1. ճանաչել և ընդունել համալսարանի կանոնադրական իրավունքները,

7.2.2. աջակցել համալսարանի կողմից աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման ուղղությամբ տարվող միջոցառումների իրականացմանը,

7.2.3. հարկ եղած դեպքում առաջարկություն ներկայացնել համալսարանին կատարվելիք այն աշխատանքների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ է իրականացնել առանձին աշխատատեղերում՝ աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման վիճակի բարելավման համար,

7.2.4. ներկայացնել առաջարկություն աշխատանքի ժամանակավորապես դադարեցման մասին, եթե աշխատատեղում առկա են նորմատիվ իրավական ակտերով սահմանված աշխատանքի անվտանգության կանոնների պահպանման կոպիտ խախտման դեպքեր,

7.2.5. մշտական հսկողություն իրականացնել մայրության պաշտպանության վերաբերյալ օրենքով սահմանված երաշխիքների և արտոնությունների կիրառման խնդիրների լուծման նկատմամբ,

7.2.6. մշտապես հետևողական լինել աշխատանքային կարգապահության սահմանված նորմերի պահպանմանը,

7.2.7. աջակցել աշխատողների մասնագիտական որակավորման պատրաստվածության շարունակական կատարելագործմանը,

7.2.8. նպաստել բարոյական նորմերի, էթիկայի կանոնների պահպանմանը,

7.2.9. մասնակցել պրոֆեսորադասախոսական կազմի կարգապահության բարձր մակարդակի դրսևորմանը,

7.2.10. կազմակերպել համալսարանի աշխատողների մշակութային և մարզական առօրյան:

8. Սոցիալական հարցեր

8.1. Համալսարանը պարտավորվում է՝

8.1.1. յուրաքանչյուր տարվա փաստացի գոյացած շահույթից ձևավորել ֆոնդեր կոլեկտիվի սոցիալ-կենցաղային տարբեր խնդիրների լուծման համար, մասնավորապես՝

ա) Աղավնաձորի ուսումնական բազայում աշխատակիցների հանգստի և առողջության պահպանման համար,

բ) մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպման և անցկացման համար:

9.2. Աշխատողների ներկայացուցիչը պարտավորվում է՝

9.2.1. Աշխատողների սոցիալ կենցաղային խնդիրների բարելավման համար հատկացնել աշխատողների ներկայացուցչի միջոցների մինչև 60%-ը:

9.3. Կողմերը պարտավորվում են՝

9.3.1. Յուրաքանչյուր տարի ռեկտորատի և արհմիության հետ համատեղ նիստում քննարկել և հաստատել Աղավնաձորի ուսումնական բազայի աշխատանքին վերաբերող ծրագիրը, ինչպես նաև աշխատակիցների հանգստի կազմակերպման ժամանակացույցը, ուղեգրերի գնագոյացման և հատկացման կարգը:

10.ՈՒսումնական և գիտահետազոտական գործունեություն

10.1. Համալսարանը պարտավորվում է՝

10.1.1. ընտրել որակյալ կադրեր ուսումնական պրոցեսը,գիտահետազոտական և տնտեսական գործունեությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար,

10.1.2. համալրել գրադարանային ֆոնդը,

10.1.3. ուսումնական գործընթացը հետզհետե հագեցնել ժամանակակից տեխնիկական և ուսումնամեթոդական միջոցներով:

10.2. Աշխատանքային կոլեկտիվը պարտավորվում է՝

10.2.1. մշտապես բարձրացնել ուսումնական, ուսումնագիտական և ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետությունը,

10.2.2. խնայողաբար օգտագործել համալսարանի նյութատեխնիկական բազան,

10.2.3. պահպանել կատարողական կարգապահությունը,

10.2.4. աշխատատեղում պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները,

10.2.5.պահպանել համալսարանի ներքին աշխատանքային կանոնները և աշխատանքային պայմանագրի պահանջները:

11. Համալսարանի և աշխատողների ներկայացուցչի հարաբերությունները

11.1. Կողմերը իրենց վրա են վերցնում բանակցությունների ընթացքի պահպանման, կոլեկտիվ պայմանագրի կնքման և պարտականությունների կատարման պատասխանատվությունը:

11.2. Աշխատողների ներկայացուցիչը իրավասու է աշխատանքային և դրա հետ կապված համալսարանի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերի վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ:

Համալսարանը պարտավոր է ուսումնասիրել առաջարկությունները և գրավոր պատասխանել աշխատողների ներկայացուցչին:

11.3. Օրենքով սահմանված դեպքերում աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական խնդիրներն ու իրավունքները շոշափող որոշումները համալսարանը պարտավոր է ընդունել՝ հաշվի առնելով աշխատողների ներկայացուցչի կարծիքը:

Աշխատողների ներկայացուցիչը պարտավոր է երկու աշխատանքային օրվա ընթացքում համալսարանին գրավոր հայտնել իր կարծիքը:

11.4. Համալսարանը երաշխավորում է՝

ա) աշխատողների ներկայացուցչին ընդգրկել համալսարանի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներում,

բ) աշխատողների սոցիալ-տնտեսական հարցերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել աշխատողների ներկայացուցչին,

գ) արհմիության գործունեության համար անվճար տրամադրել անհրաժեշտ

աշխատասենյակ՝ հնարավոր կահավորումներով, ինչպես և համապատասխան սրահներ՝ համաժողովներ անցկացնելու համար,

դ) արհմիության անդամների դիմումների առկայության հիմքով՝ անդամավճարը գանձել կենտրոնացված կարգով և փոխանցել արհմիության հաշվին՝ տվյալ ամսվա աշխատավարձը վճարելուց հետո, 10 օրվա ընթացքում,

ե) համալսարանի արհմիության ղեկավար մարմնում ընտրված և հիմնական աշխատանքից չազատված աշխատողներին արհմիության միջոցառումներին մասնակցելու կամ որակավորումը բարձրացնելու համար աշխատանքային պարտականություններից ազատել՝ պահպանելով աշխատավարձը:

12. Եզրափակիչ դրույթներ

12.1. Սույն կոլեկտիվ պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ներկայացուցիչների ստորագրման պահից և գործում է երեք տարի: Կողմերը իրավունք ունեն երկարացնելու պայմանագրի գործողության ժամկետը, որը չի կարող գերազանցել երեք տարին:

12.2. Սույն կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ կողմերից մեկի գրավոր ներկայացված առաջարկությունը մյուս կողմին ներկայացվելուց 10 օրվա ընթացքում՝ համատեղ քննարկման և համապատասխան արձանագրություն կազմելու միջոցով: Կողմերի անհամաձայնության դեպքում այն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

12.3. Կոլեկտիվ պայմանագրի կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում են այն ստորագրող կողմերը:

12.4. Համալսարանը և աշխատողների ներկայացուցիչը պարտավորվում են պաշտոնատար անձանց նկատմամբ, ովքեր չեն կատարում սույն պայմանագրի

պայմանները, կիրառել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցներ:

12.5. Կողմերը տարին մեկ անգամ տալիս են հաշվետվություն կոլեկտիվ պայմանագրի կատարման ընթացքի մասին:

Կոլեկտիվ պայմանագիրը հավանության է արժանացել համալսարանի աշխատողների արհմիութենական սկզբնական կազմակերպություններում:

Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

Կողմերի հասցեները և ստորագրությունները

ՀՀ, ք.Երևան,Տիգրան Մեծի 17
,,Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական
համալսարան,, հիմնադրամ
Ռեկտոր, պրոֆեսոր

Ռ.Գ.ՄԻՐՋԱԽԱՆՅԱՆ

ՀՀ, ք.Երևան,Տիգրան Մեծի 17
,,Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական
համալսարանի արհեստակցական
կազմակերպություն,,
Նախագահ

Հ.Գ.ՍԱՐԳՍՅԱՆ